որ Պօղոս գրեաց զթուղթն Կողոսացւոց. և ունի Անդրիանոս գրեալ երեք բանս խրատական մարդոյ, որ է այս. « մարդ որ լինի 'ի ճաշս պարարտ, 'ի կեանս փափուկ, 'ի զգեստս պճնեալ, այնպիսի՛ն ոչ գիտէ թէ՝ աշխարհս ի՞նչ է,,: Մեռաւ 'ի գեօղն իւր Օրդաւիլ՝ հեռի 'ի Հռոմայ ԺԲ. մղ*), և բերեալ թաղեցին զնա 'ի Հռոմ՝ փառօք: Սա որպէս քրիստոնեայ էր. բայց ոչ լիապէս. և ոմանք ասեն թէ՝ գնաց 'ի Պարսս 'ի պատերազմ, և սպանեալ եղեալ մեռաւ և թաղեցաւ 'ի Խառան մերձ յՈւռհա:

Մարկոս Անտոնինոս՝ սկսաւ յամի Տեառն ՃԿԱ. ընդ եղբօր իւրում Օրեղիանոսի ինքնակալեաց ամս ԺԹ: Սա յոյժ ունելով կեանս հանդարտ, էր գիտակ յոյժ Յոյն և Լատին իմաստութեանց: Սա ողորմած գոլով ոչ առնոյր

(*) Մղոն. փարսախ:

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան